«Երաշխավորված է»

Տնօրենի՝ ՄԿԱ գծով տեղակալ ______ Ռ. Հասասյան

«31» ____08____ 2023 թ.

«Հաստատված է»

Տնօրեն՝ ______ Գ. Ղարիբյան

«31» ____08____ 2023 թ.

«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի

Գավառի Ս. Քոչարյանցի անվան N1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

# Դասղեկի տարեկան աշխատանքային պլան

## 8 Բ դասարան

Դասղեկ՝ Գյուլազյան Սվետլանա

2023-2024 ուստարի

# Դասղեկի աշխատանքի փուլային նկարագրություն

| Ուսումնական տարվա սկզբին | Ամենօրյա աշխատանք | Ամենշաբաթյա աշխատանք | Ամենամսյա աշխատանքներ |
|---|---|---|---|
| 1.Վերստուգել կամ պատրաստել դասարանի սոցիալական անձնագիրը | 1. Հետևել աշակերտների հաճախումներին և բացակայություններին | 1. Անցկացնել դասղեկական ժամեր | 1.Կազմակերպել ծնողական ժողովներ |
| 2. Սպառիչ տեղեկություններ հավաքել դասարանի աշակերտների մասին | 2.Հետևել կարգապահությանը | 2. Կատարել այլ պլանավորված աշխատանքներ | 2. Մասնակցել ԿԱՊԿՈՒ սովորողների դիտարկմանը, բացահայտմանը, գնահատմանը /սեպտեմբեր/ և մանկավարժահոգեբանական աջակցության համապատասխան ծառայությունների մշակմանը, դրանց ապահովմանը: |
| 3. Կազմել դասարանի դաստիարակչական աշխատանքի պլանը | 3. Հետևել սանիտարական, հակահամաճարակային նորմերի պահպանմանը | 3. Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն, կամավորություն) | 3. Մասնակցել ամենամսյա ԿԱՊԿՈՒ աշակերտների դասավանդող ուսուցիչների, ԱԽ անդամների և ծնողների ժողովներին: |
| 4.Իրականացնել դասարանի համար սահմանված գործավարությունը | 4. Դպրոցի տնօրենությանը ներկայացնել սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն | 4. Մշտապես ապահովել ծնող – դպրոց կապը՝ աշակերտների ուսումնադաստիարակչական աշատանքները էլ ավելի արդյունավետ դարձնելու համար: | |
| 5. Աշակերտների ուղղորդել մանակցելու դպրոցական խմբակների | 5. Դպրոցական դասագրքերի և աշակերտական, գրենական պիտույքների վիճակի ստուգում | 5.Դասերից և վարքից անբավարար աշակերտների և նրանց ծնողների հետ աշխատել առանձին, որպեսզի շտկեն այդ թերությունները | |

| Դաստիարակչական աշխատանք | | |
|---|---|---|
| Գործառույթները | Նպատակն ու խնդիրները | Ուղղվածությունը |
| 1.Աշակերտի սոցիալական պաշտպանության գործառույթ | 1.Դասարանական կոլեկտիվի ձևավորում | 1.Քաղաքացիական պատասխանատվության ձևավորում, հարգանք երկրի պատմության և մշակույթի հանդեպ |
| 2.Կազմակերպչական գործառույթ | 2.Անհատի ձևավորմանը նպաստող, յուրաքանչյուրի անհատականությունը ողջունող և ներուժը բացահայտող միջավայրի ապահովում | 2.Դասեր՝ նվիրված երկրին, քաղաքին, գյուղին |
| 3.Աշակերտական ինքնակառավարման խթանման գործառույթ, որը երաշխավորում է նրանց ինքնուրույնության խթանումը | 3.Առողջ ապրելակերպի վարքագծի ձևավորում | 3.Վնասակար սովորույթների հանդեպ բացասական վերբերմունքի ձևավորում |
| 4.Ախտորոշման գործառույթ, որը ենթադրում է աշակերտների ելակետային մակարդակի վերհանում և շարունակական համեմատության մեջ փոփոխությունների արձանագրում | 4.Դասարանում համակարգված աշխատանքի կազմակերպում | 4.Տարբեր զրույցների, բանավեճերի կազմակերպում |
| 6.Պլանավորման, ծրագրման գործառույթ, կանոնակարգում է մանկավարժական գործունեությունը, հեշտացնում է արդյունքների հետևողական վերահսկումը | 5.Աշակերտների, աշակերտների ու մանկավարժների միջև բարյացակամ, ներդաշնակ փոխհարաբերությունների ձևավորում | 5. Իրավական գիտակցության և հանդուրժողականության խթանում |
| | 6.Աշակերտների արժեքային համակարգի ձևավորում | 6.Էքսկուրսիաներ պատմական հուշարձաններ, տեսարժան վայրեր |
| | 7.Աշակերտների ստեղծագործական, հասարակայնամետ գործունեության կազմակերպում | |

## ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| | | |
|---|---|---|
| 1. | ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ<br>(դասարանի ընդհանուր բնութագիրը ) | Դասարանը բաղկացած է 19 հոգուց: Ընդհանուր առմամբ աշակերտները ունեն բավարար ընդունակություններ: Գերազանց սովորող աշակերտները 2 են: Դասարանում բոլոր աշակերտները համախմբված են: Դասարանի աշակերտների սոցիալական վիճակը գնահատվում է բավարար: Երեխաները հաճախում են դպրոց ճիշտ ժամանակին և ցուցաբերում են ակտիվություն: Դասարանում չկան դժվար դաստիարակվող աշակերտներ: Դասարանում սովորում են ԿԱՊԿՈՒ 2 աշակերտներ (1-ը մանկատան սան է)։ |

| | | | |
|---|---|---|---|
| 2. | Ուսումնա–դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում | | Ուսումնա–դաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել աշակերտների վարքին և առաջադիմությանը.<br>● կատարել դասալսումներ (աշակերտների մասնակցությունը դասին պարզելու նպատակով)<br>● կազմակերպել քննարկումներ դասարանում դասավանդող ուսուցիչների, անբավարար առաջադիմություն ունեցող սովորողների և նրանց ծնողների հետ՝ անհրաժեշտության դեպքում սովորողի համար կազմակերպել ուսումնական օգնություն այդ թերությունները շտկելու նպատակով<br>● կազմակերպել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը<br>● աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենա, համագործակցություն, փոխօգնություն և այլն):<br>● հետևողական աշխատանք կատարել ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ՝ համագործակցելով մանկավարժահոգեբանական աջակցման խմբի հետ: Մասնակցել ԿԱՊԿՈՒ աշակերտների դիտարկմանը, բացահայտմանը: Ինչպես նաև մասնակցել ԱՈՒՊ–ի մշակման և վարման գործընթացի կազմակերպմանը: Մասնակցել ամենամսյա ժողովներին: |
| 3. | ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ | | |
| | 3.1 | Հոգևոր դաստիարակություն | Խնդիրները՝ աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:<br>–Հոգևոր դաստիարակությունը հիմնված է մշակույթի, կրոնի, լեզվի և այլ ազգային արժեքների ճիշտ արժևորման հիման վրա, որի համար նպաստավոր են դասղեկական ժամերի ընթացքում քննարկվելիք թեմաները: Կարևոր հիմք է պատմության խորքից մեզ ուղեկցող իրադարձությունները, որոնք կապ ունեն կրոնի ընտրության, հավատի, հոգևոր արժեքների հետ: Այս թեմաների քննարկումը նույնպես պարտադիր կետ է: Հոգևոր դաստիարակությունը շատ կարևոր է աշակերտի արժեքային համակարգի ձևավորման համար, մշակութային ժառանգությունը փոխանցելու համար:<br>–Հայ առաքելական եկեղեցու էության լուսաբանում: Հոգևոր, հարուստ ներաշխարհի ձևավորում և զարգացում: Հոգու կրթություն և մտքի թռիչք:<br>–Ծանոթացնել ազգային ավանդույթներին և տոներին.Տյառնընդառաջ /զրույց թեմայի շուրջ/; Սուրբ Ծնունդ /զրույց թեմայի շուրջ/;Սուրբ Սարգիս /զրույց թեմայի շուրջ/; Սուրբ Զատիկ /զրույց թեմայի շուրջ/:<br>–Գեղագիտական դաստիարակության զարգացում և ձևավորում /այցելություն Գավառի երկրագիտական թանգարան, պատկերասրահ/:<br>–Գիրք նվիրելու օր: Թումանյանական օրեր /միմյանց գիրք նվիրելու սովորույթի ձևավորում/: |

| | | | |
|---|---|---|---|
| | 3. 2 | Գեղագիտական դաստիարակություն | Խնդիրները՝ աշակերտների մոտ սերմանել գեղեցիկը տեսնելու և ընկալելու հմտություն: –Գեղագիտական դաստիարակությունը կազմում է մարդու ընդհանուր զարգացածության զգալի մասը: Որքան խորն է գեղագիտական ընկալումը, այնքան ամուր է մարդ–արվեստ, մարդ–բնություն կապը: Ֆիլմերի միջոցով ցուցադրել և բացատրել թե գեղեցիկը ինչ դեր ունի ներկայիս կյանքում: Բացի այդ լսել աշակերտների կարծիքը այդ նյութի վերաբերյալ: Կյանքից բերել օրինակներ և ձևավորել գեղագիտական ճաշակ:<br>–Այցելություն թատրոններ, տարբեր մշակութային օջախներ: –Հոգու կրթություն և մտքի թռիչք /զրույց բարության, հոգու գեղեցկության մասին/: –Մարդկային արատներ /զրույց վատ և վնասակար սովորույթների մասին, վնասակար սովորույթների հանդեպ բացասական վերբերմունքի ձևավորում/: –Հանդիպումներ մշակույթի, քաղաքական, հասարակական գործիչների հետ: –“Ուսուցչի օր”/զրույց ուսուցչի դերը մեր կյանքում /:<br>– –Ամանորյա տոներ: Ամանորյա ջերմ մաղթանքներ և բացիկներ, դասարանի ձևավորում: –Մեդիա տեղեկատվության մշակույթի զարգացում: –Գիտատեխնիկական զարգացվածության բարձրացում /ՏՀՏ–ից ճիշտ օգտվելու կուլտուրայի մշակում և զարգացում/:<br>– Լրատվամիջոցներ և կերպարներ: Լրատվամիջոցների և համացանցի լավ և վատ կողմերը: –Գեղագիտական դաստիարակության զարգացում /զրույց համաշխարհային կոթողների մասին՝ աշխարհի յոթ հրաշալիքները, ժամանակակից հայտնի կառույցները/: |
| | 3. 3 | Ռազմահայրենասիրական դաստիարակություն | Խնդիրները՝ աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք հայրենիքի, ակնածանք՝ ֆիդայիների և հայ ազատամարտիկների նկատմամբ: Բնավորության մեջ ձևավորել հայրենասիրություն և ռազմարվեստ:<br>–Հայրենասիրության կրթության վերաբերյալ կազմակերպել քննարկումներ: Թվարկել այն բնավորության գծերը, որտեղ ակներև է հայրենասիրությունը և ռազմարվեստ ձևերը:<br>–Հիշատակի և խոնարհումի օր՝ Արցախյան պատերազմում զոհված հերոսների մասին /զրույց/:<br>–Զրույց հայկական բանակի անհրաժեշտության մասին, հայ արյուծ զինվորի սխրանքի մասին:<br>– Զրույց ՀՀ զինանշանի, դրոշի մասին:<br>–Բնավորության մեջ ձևավորել հայրենասիրություն և ռազմարվեստ: –Հայոց բանակ՝ պապայի զինվորնեմ ես /զրույց թեմայի շուրջ/: –Հայոց Ցեղասպանություն: Հույս և հավատ սեփական ուժերի հանդեպ: Ապրիլի 24–ը՝ եղեռնի 107–րդ տարելիցը / հիշատակման օր, զրույց թեմայի շուրջ, ֆիլմի դիտում/: –Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 77–րդ տարելիցը /զրույց հայ ազգի մարշալները թեմայով/: |

| | | | |
|---|---|---|---|
| | 3. 4 | Քաղաքացիական, բարոյական | Խնդիրները՝ քաղաքացիական պատասխանատվության, արժանապատվության ձևավորում, հարգանք իր երկրի մշակույթի և պատմության հանդեպ: -Դասարանական աշակերտական խորհրդի ձևավորում /ընտրություն /: -21 սեպտեմբերի Անկախության տոն՝Անկախության անգնահատելի դերն ինձ համար /զրույց անկախության 31-ամյակին նվիրված թեմայով, “Իմ հայրենիքը” թեմայով նկարազարդումներ/:<br>- Զրույցներ պատմամշակութային հուշարձանների մասին /նկարների դիտում, այցելություն պատմամշակութային վայրեր/: - Օգնել երեխաներին արդյունավետ կերպով հարմարվել աշխարհում անընդհատ տեղի ունեցող փոփոխություններին /զրույց/:<br>-Աշակերտի մոտ ձևավորել հարգալից վերաբերմունք լեզվի, մշակույթի և ազգային ավանդույթների նկատմամբ՝ դարձնելով նրան այդ արժեքների կայուն կրող /զրույց գեղեցիկ և ճիշտ խոսելու, հայոց լեզուն անաղարտ պահելու մասին/: - Նպաստել հայության ինքնության ամրապնդմանը նպաստող գործողությունների իրականացմանը /զրույց թեմայի վերաբերյալ/:<br>- Ո՞րն է իրական գեղեցկությունն ու հմայքը /զրույց գեղեցիկի և հոգու գեղեցկության մասին/:<br>-Հայաստանի հուշարձաններ /զրույց թեմայի շուրջ/: Ո՞ւր կուզենայիք գնալ /էքսկուրսիայի պլանավորում Հայաստանի տեսարժան վայրեր/: |
| | 3. 5 | Ֆիզիկական դաստիարակություն | Խնդիրները՝ ֆիզիկական զարգացմանն ուղղված պայմանների ստեղծում, վնասակար սովորությունների հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորում : -Զրույցներ առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորում՝ սպորտ + առողջ սնունդ /առողջ ապրելակերպի վերաբերյալ զրույցներ բուժքրոջ հետ/:<br>-Ֆիզիկական որակների ձևավորում՝ ճարպկության, արագաշարժության, դիմացկունության, ուժի զարգացում, կատարելագործում: - Ֆիզիկական զարգացմանն ուղղված պայմանների ստեղծում, վնասակար սովորությունների հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորում:<br>-Անձի բարոյակամային որակական գծերի՝ ինքնուրույնության, ակտիվության, մարդկային փոխհարաբերության կուլտուրայի դաստիարակում /զրույց ընկերասիրության, փոխօգնության մասին/:<br>-Մարմնակրթություն, առողջապահություն:<br>-Հիգիենիկ հարցեր /զրույց օրվա ռեժիմի, հանգստի ռեժիմի, անձնական հիգիենայի մասին, դասասենյակի օդափոխում/: |

| | | | |
|---|---|---|---|
| | 3. 6 | Աշխատանքային դաստիարակություն | Խնդիրները՝ աշխատանքային հմտությունների և կառուցողական վերաբերմունքի խթանում:<br>−Աշխատանքի նկատմամբ պահանջմունքի ձևավորումը, դաստիարակությունը: −Աշակերտների աշխատանքային գործունեության կազմակերպումը և աշխատանքային կարողությունների և հմտությունների ձևավորումը: − Սահմանել կարգ. յուրաքանչյուր աշակերտ դպրոցում լինի դասերը սկսվելուց 10 րոպե առաջ:<br>−Դասասենյակի կանաչապատում, ծաղիկների խնամք, դասասենյակի օդափոխում: −Դասարանի սանիտարական վիճակի պահպանում, հերթապահություն դասարանում: −Խթանել աշակերտների կամավորության զարգացմանը, մասնակցություն ունենալ հասարակական աշխատանքներին /զրույց կամավորության մասին, օրինակներով բացատրել որն է կամավորությունը, խթանել սովորողներին հասարակական աշխատանքներին մասնակցելուն/: − Զարգացնել, ամրացնել երեխայի մեջ եղած ամեն լավը, դրականը, ազնիվը, նպատակին հասնելու ձգտումը:<br>− Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը , որ կարողանան գոյատևել ներկայիս դժվար պայմաններում:<br>−Աշխատանքին, արհեստներին նվիրված զրույցների կազմակերպում: −Նշանավոր մարդկանց օրինակով արժեհամակարգի ձևավորում Խթանել աշակերտների գիտատեխնիկական զարգացումը ՝ ՏՀՏ−ից ճիշտ օգտվելու կուլտուրայի ձևավորում: |
| | 3. 7 | Իրավական դաստիարակություն | Խնդիրները՝ Իրավական գիտակցության և հանդուրժողականության խթանում: −Աշակերտների հետ քննարկել իրենց իրավունքներն ու պարտականությունները /ընթերցում, վերլուծում/:<br>−«Մարդու իրավունքների» օրը /զրույց թեմայի շուրջ/:<br>−Աշակերտների պետականության դերի զարգացում /հայացքների ձևավորում/: |
| | 3. 8 | Բնապահպանական դաստիարակություն | Խնդիրները՝ բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի ձևավորում: −Թվարկել բնապահպանական մի շարք խնդիրներ, որոնք առկա են իրենց շրջապատում և այդ խնդիրը գլոբալ է:<br>−Բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի ձևավորում:<br>−Բնապահպանություն /զրույց ինչպես օգնել ձմեռող թռչուններին/: − Երկրագունդը բոլորիս տունն է /ֆիլմի դիտում, քննարկում/: −Բնական աղետներ՝ երկրաշարժ, հրդեհներ, ջրհեղեղներ /զրույց աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներին արձագանքելու թեմայով, ֆիլմի դիտում, քննարկում/:<br>−Պատմամշակութային արժեքների գնահատում, արժևորում /էքսկուրսիայի կազմակերպում/: |
| 4. | Դպրոց−ընտանիք կապը | | Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն , որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց ընտանիք կապը, որպեսի աշակերտները ավելի լավ սովորեն: Ինչպես նաև ծնողական ժողովների միջոցով ձևավորել սովորողի նկատմամբ դպրոցի և ընտանիքի մեկ միասնական մանկավարժական պահանջներ: |

| | | |
|---|---|---|
| 5. | Աշխատանք ծնողների հետ | -Ծնողխորհրդի ընտրում, խմբի ձևավորում: -Ծնողների ներգրավումը դաստիարակչական աշխատանքներում՝ ընտանիք -դպրոց, ծնող-ուսուցող, ծնող- խորհրդատու:<br>-Ծնողական ժողովների հրավիրում:<br>- Անհատական աշխատանք խնդրահարույց աշակերտի ծնողների հետ, մանկատան սաների դաստիարակի հետ, հոգեբանի հետ: -Կազմակերպել /անհրաժեշտության դեպքում/ անբավարար գնահատականներ կամ ցածր առաջադիմություն ունեցող սովորողներին ուսումնական օգնություն /զրույց ծնողի և պարապող ուսուցչի հետ/:<br>-Մասնակցություն ամենամսյա ԿԱՊԿՈՒ աշակերտների դասավանդող ուսուցիչների, ԱԽ անդամների և ծնողների ժողովներին Անհատական զրույց ծնողների հետ: |

# Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը

| Դասի թեման | Նպատակը | Ուսումնական շաբաթը | Կատարվել է |
|---|---|---|---|
| I կիսամյակ | | | |
| Գիտելիքի օր:<br>Աշակերտների իրավունքները և պարտականությունները դպրոցում: Անվտանգության կանոնների պահպանում: | Զրույց "Գիտելիքը ուժ է" թեմայով:<br>Աշակերտներին ծանոթացնել և հիշեցնել դպրոցում մշակված կանոնների պահպանման և հետևելու մասին, իրենց պարտականությունների մասին: | 1-ին շաբաթ | |
| Լրատվամիջոցներ և կերպարներ: | Լրատվամիջոցների վերլուծությամբ վեր հանել բացասական և կարծրատիպային տեսանկյունով ներկայացրած կերպարները: | 2-րդ շաբաթ | |
| Ապագայի անիվը | Մտորել որևէ իրադարձություն, գաղափարախոսություն և վերլուծել հետևանքների փոխկապակցվածությունը: | 3-րդ շաբաթ | |
| Անկախության անգնահատելի դերն ինձ համար: | Զրույց անկախության 32-րդ տարեդարձի մասին:<br>Հայրենիքը սկսվում է դպրոցից: | 4-րդ շաբաթ | |
| 27 սեպտեմբերի - Հիշատակի օր | Զրույց զոհված հերոսների մասին: | 5-րդ շաբաթ | |
| Աշխարհը հրաշալի է | Քննարկել շրջակա միջավայրի վրա ազդող տարատեսակ գործոնները և քննարկել, թե ինչպես կարելի է պահպանել շրջակա միջավայրը: | 6-րդ շաբաթ | |
| Քաղաքացիական ինքնություն | Ինչպիսի որակներ պիտի ունենա քաղաքացին, քաղաքացի լինելն ինչքանով է առնչվում իրենց: | 7-րդ շաբաթ | |

| | | | |
|---|---|---|---|
| Ընկերասիրություն, փոխօգնություն, հանդուրժողականություն: Հանդուրժող վարքի սկզբունքները | Վերհանել հանդուրժող մարդուն բնորոշ առանձնահատկությունները: Ձևավորել հանդուրժող վերաբերմունք: | 8-րդ շաբաթ | |
| Փոքրիկ պատմություններ մարդկային և հասարակական խնդիրների մասին | Բացահայտել մարդկային, բարոյական, քաղաքացիական որակներ, արժեքներ, հասարակական խնդիրներ (օրինակներ պատմվածքներից): | 9-րդ շաբաթ | |
| Հոգու կրթություն և մտքի թռիչք: Կարող եմ օգտակար լինել | Ինչպես բարձրացնել մարդկանց տեղեկացվածությունը (փեյքեր): | 10-րդ շաբաթ | |
| Ս. Քոչարյանցի ծննդյան հիշատակման օր | Զրույց անվանի մարդկանց մասին: | 11-րդ շաբաթ | |
| Հայաստանի պատմամշակութային ժառանգությունը | Նպաստել հայրենանաճաչության բարձրացմանը: Արժևորել անցյալի ձեռքբերումներն և հաղթանակները: | 12-րդ շաբաթ | |
| Պետական խորհրդանիշեր | Կարևորել պետությունների անկախությունը և պետական խորհրդանիշները: | 13-րդ շաբաթ | |
| Ստիպված եմ հարցնել | Խթանել ոչ ստանդարտ իրավիճակում կողմնորոշվելու հմտությունները | 14-րդ շաբաթ | |
| Եկեք բոլորս փորձենք այն, ինչը հնարավոր է | Կարևորել փոխօգնության և համագործակցության դերը մարդկանց կյանքում: | 15-րդ շաբաթ | |
| **II** կիսամյակ | | | |
| Ուղևորները | Կանխակալ կարծիքնե,ր  քննարկել դրանց պատճառները ,բացահայտել կանխարգելության վտանգները: | 16-րդ շաբաթ | |
| Եթե ես լինեի. . . | Հստակեցնել յուրաքանչյուր աշակերտի ցանկությունները: | 17-րդ շաբաթ | |
| Հայրենի'ք, ես զարկն եմ քո բազկի: Հայոց բանակ: Հունվարի 28-ը ՝Հայոց  բանակի օրն է | Զրույց Հայոց բանակի մասին: | 18-րդ շաբաթ | |
| Աշխատանքը ազնվացնում է մարդուն: | Աշակերտների ստեղծագործական, հասարակական գործունեությունը: | 19-րդ շաբաթ | |
| Եկեղեցական տոներ: Տյառնընդառաջ: | Սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ, կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը: | 20-րդ շաբաթ | |
| Թումանյանական օրեր, գիրք նվիրելու արարողություն: | Թումանյանական օրեր /միմյանց գիրք նվիրելու սովորույթի ձևավորում/ | 21-րդ շաբաթ | |
| Տարվա եղանակները: | Զրույցներ բնության պահպանության, էկոլոգիայի պահպանման մասին: | 22-րդ շաբաթ | |
| Ո՞վ է հոգեպես հարուստ իմ կարծիքով: | Զրույց հարգանք մեծի, ուսուցչի և դիմացինի նկատմամբ: | 23-րդ շաբաթ | |

| | | | |
|---|---|---|---|
| Ո՞րն է իրական գեղեցկությունն ու հմայքը: Մարտի 8-ը՝ Կանանց միջազգային օր: | Զրույց գեղեցկության և բարոյականության վերաբերյալ: | 24-րդ շաբաթ | |
| Առողջ սնունդ, առողջ ապրելակերպ: Մարմնակրթություն, առողջապահություն: Անձնական հիգիենա, առողջ ապրելակերպ, վնասակար սովորույթներ: | Զրույց վնասակար սովորույթների մասին, առողջ ապրելակերպ վարելու մասին | 25-րդ շաբաթ | |
| Ես երջանիկ եմ, երբ. . . . | Զրույց երջանկության մասին<br>Ծննդյան և այլ տոների սպասելիքները | 26-րդ շաբաթ | |
| Աշակերտների գիտատեխնիկական զարգացում ՝ ՏՀՏ-ից ճիշտ օգտվելու կուլտուրայի ձևավորում: | Լրատվամիջոցների և համացանցի լավ և վատ կողմերը: | 27-րդ շաբաթ | |
| Պատմամշակութային արժեքներ: 45 րոպե աշխարհի շուրջ: | Պատմամշակութային արժեքների գնահատում, արժևորում: | 28-րդ շաբաթ | |
| Իմ դասարանի և դպրոցի գույքը | Զրույց “Պահպանենք մեր դպրոցը” թեմայով: | 29-րդ շաբաթ | |
| Ո՞ւմ կուզեի նմանվել: | Նշանավոր մարդկանց օրինակով արժեհամակարգի ձևավորում | 30-րդ շաբաթ | |
| Հայոց Ցեղասպանություն: Հույս և հավատ սեփական ուժերի հանդեպ: | Զրույց “Հայոց մեծ եղեռնի զոհերի հիշատակի օր” թեմայով | 31-րդ շաբաթ | |
| Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 79-րդ տարելիցը: | Զրույց “Հաղթանակներ” թեմայով: | 32-րդ շաբաթ | |
| Դասարանական աշակերտական խորհուրդ: | Դասարանական խորհրդի հետ ամփոփել դասարանի կենսագործունեության փուլերի աշխատանքները | 33-րդ շաբաթ | |
| Ամփոփիչ դաս: Մեր ձեռքբերումները և բացթողումները: | Զրույց “Իմ ձեռքբերումներն ու բացթողումները” թեմայով: | 34-րդ շաբաթ | |

Ծնողական ժողովներ

| Անցկացման օրը | Քննարկվող հարցեր | Համառոտ բովանդակությունը |
|---|---|---|
| **1-**ին կիսամյակ<br>Օգոստոսի 31 | 1. Դասարանի ընդհանուր բնութագիրը, այս տարվա անելիքները:<br>2. Դասարանի ծնողական խորհրդի, նախագահի ընտրություն<br>3. Այլ հարցեր: | 1. Ներկայացնել դասարանը, բնութագրել և խոսել հետագա ծրագրերի մասին<br>2. Դասարանի ծնողների ընդհանուր ժողովի կողմից՝ մեկ ուսումնական տարվա համար, դասարանի ծնողական խորհրդի, նախագահի ընտրություն: |
| Նոյեմբեր | 1. Աշակերտների առաջադիմության հետ կապված հարցերի քննարկում:<br>2023-2024 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքներ<br>2. Կազմակերպչական հարցեր<br>3. Այլ հարցեր: | 1. Ներկայացնել 2023_2024 ուստարվա պլանների սպասվող աշխատանքները և քննարկել երեխաների հիգիենային ու առաջադիմությանը վերաբերող հարցեր:<br>2. Ուշադրությունը կենտրոնացնել երեխաների ուսմանը,առաջադիմությանը և հիգիենային:<br>3. Հատուկ ուշադրություն դարձնել գրքերի պահպանմանը, ուշացումներին, անհարգելի բացակայություններին և լինել օրինակելի: |
| **2-**րդ կիսամյակ<br>Հունվար | 1. 2023-2024 ուստարվա 1-ին կիսամյակի առաջադիմության արդյունքների ամփոփում:<br>2. 2 -րդ կիսամյակի ընթացքում նախատեսված աշխատանքների քննարկում:<br>3. Այլ հարցեր: | 1. Ամփոփել և քննարկել 1-ին կիսամյակի արդյունքները, երեխաների վարքին և կեցվածքին վերաբերվող հարցեր<br>2. Ներկայացնել ուսուցիչների կարծիքը դասարանի աշակերտների մասին, խոսել 2-րդ կիսամյակի խնդիրների մասին, աշակերտների էլ ավելի բարձր առաջադիմության մասին և մոտակա անելիքների մասին<br>3. Պատասխանել ծնողների հարցերին, քննարկել նրանց հուզող խնդիրները |
| Մարտ | 1. Աշակերտների առաջադիմության հետ կապված հարցերի քննարկում:<br>2. Այլ հարցեր: | 1. Ուշադրությունը կենտրոնացնել երեխաների ուսմանը,առաջադիմությանը և հիգիենային: |
| Մայիս՝ տարեվերջ | 1. 2023_2024 ուստարվա 2-րդ կիսամյակի առաջադիմության արդյունքների ամփոփում:<br>2. Էքսկուրսիայի կազմակերպում: | 1.Ամփոփելով երկրորդ կիսամյակում կատարված աշխատանքները<br>2.Տարեկան առաջադիմության ամփոփում |

ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱՐԱՆԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՏ

| Անցկացման օ/ա/տ | Քննարկվող հարցերը | Զրույցի համառոտ բովանդակությունը | Ծանոթություն |
| --- | --- | --- | --- |
| | • աշխատանքային պլանի կազմում, ուստարվա աշխատանքների պլանավորում<br>• կազմակերպչական հարցեր | Համառոտ ներկայացվեցին ծնողխորհրդի անելիքները, ներկայիս պայմաններում պարտականությունները: 7րդ դասարանում նկատված թերությունններն ու բացթողումները շտկելու, վերացնելու ուղիներն ու հնարավորությունները: | |
| | | | |
| | | | |

Դասարանի սոցիալական անձնագիրը

Դասարան_____8բ

1. Երեխաների թիվը դասարանում______________19

ա) աղջիկ__________________________________________________8

բ) տղա______________________________________________________11

2. Ընտանիքների թիվը_________________________________17

ա) լրիվ կազմով_______________________________________15

բ) ոչ լրիվ կազմով____________________________________2 /միայնակ մայր/

գ)խնամակալություն————————————2 /մանկատան սան/

3. Բազմազավակ ընտանիքների թիվը____________7

Նրանցում երեխաների թիվը________________________3, 1 ընտանիքում ———————4, 1ընտանիքում ——————5

4. Ընտանիքներ, որտեղ ծնողները չեն աշխատում___ 4 ընտանիքում ծնողները չեն աշխատում

10 ընտանիքում՝ մայրերը չեն աշխատում

5. Խնամակալության տակ գտնվող երեխաների թիվը_____2 երեխա՝ մանկատան սան

6. Դասերից հաճախակի բացակայելու հակում ունեցող երեխաներ_______0

7. "Դժվար դաստիարակվող երեխա" ———————— 0

Դասղեկ Ս.Գյուլազյան